

Հայաստանի Հանրապետություն, Երևան, Մարգարյան 6/2
Republic of Armenia Yerevan Margaryan 6/2

Հեռ. (374 10) 394279
Tel. (374 10) 394279

N. 309

27 10 2008 թ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 28-ի N52 արձանագրային որոշմամբ հաստատված «2007-2015 թվականների Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի» Ռազմավարություն 6-ը և նպատակ ունենալով կասեցնել տուբերկուլոզի տարածումը՝ կապված ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի աճի հետ՝

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒՄԵՄ՝

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետությունում ՏԲ/ՄԻԱՎ/ՉԻԱՀ ոլորտի քաղաքականության մշակման, համատեղ գործողությունների համակարգման և վերջիններիս վերահսկման ու արդյունավետության գնահատման աշխատանքային խումբ՝ հետևյալ կազմով.

Ա. Թադևոսյան - Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար /աշխատանքային խմբի ղեկավար/

Գ. Տատուրյան - Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» պետական ոչ առևտրային կազմակերպության ֆթիզիատոր,

Ն. Մեժլումյան - Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» պետական ոչ առևտրային կազմակերպության վիճակագիր,

Ն. Հովհաննիսյան - Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» պետական ոչ առևտրային կազմակերպության համաճարակաբան,

Ա. Թոռչյան - Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության Գլոբալ հիմնադրամի կողմից «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում» դրամաշնորհային ծրագիրը համակարգող խմբի մոնիտորինգի և գնահատման մասնագետ,

Մ. Մինոնյան - Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության
Գլխավոր հիմնադրամի կողմից «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի
ուժեղացում» դրամաշնորհային ծրագիրը համակարգող խմբի ղեկավարի օգնական
/աշխատանքային խմբի քարտուղար/,

Ա. Պապոյան - «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն»-ի
համաճարակաբանական հսկման բաժնի վարիչ,

Վ. Արզաքանյան - «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի
համաճարակաբանական հսկման բաժնի բժիշկ- համաճարակաբան,

Ժ. Հակոբյան - «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի
բժշկական օգնության և սպասարկման բաժնի ընտանեկան բժիշկ,

Հ.Ասլանյան - ԳՈՊԱ/ԵՊՈՍ խորհրդատվական նախագծի համակարգող Հայաստանի
Հանրապետությունում:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Տուբերկուլոզի
դեմ պայքարի ազգային գրասենյակ» պետական ոչ առևտրային կազմակերպության
տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Թադևոսյանին՝

1) մշակել սույն հանձնարարականի 1-ին կետով ստեղծվող աշխատանքային խմբի
գործողությունների պլանը և մեկ շաբաթյա ժամկետում ներկայացնել Տուբերկուլոզի դեմ
պայքարի ազգային ծրագրի ղեկավարի հաստատմանը,

2) պարբերաբար կազմակերպել աշխատանքային խմբի հավաք՝ Տուբերկուլոզի դեմ
պայքարի ազգային ծրագրի ղեկավարի կողմից նախապես հաստատված
ժամանակացույցի և օրակարգի համաձայն:

3. Աշխատանքային խմբին՝

1) համագործակցել «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի, ՀՀ-
ում ՍԻԱՎ/ՁԻԱՀ-ի, Տուբերկուլոզի և Մալարիայի դեմ ուղղված միջոցառումների
համակարգող Հանձնաժողովի և բոլոր շահագրգիռ հասարակական
կազմակերպությունների հետ:

4. Սույն հանձնարարականի կատարման հսկողությունը ստանձնում եմ ինքս:

ՀՀ ԱՆ աշխատակազմի բժշկական օգնության
կազմակերպման վարչության պետ,
Տուբերկուլոզի դեմ պայքարի
ազգային ծրագրի ղեկավար

Վ. Պողոսյան

